«Շիրակացու ճեմարան»
Միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2022-2023

Պատմություն (7-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____
_____ Դպրոց _____
_____ Դասարան___ Խումբ _____

1. Մեծ Հայքի ո՞ր նահանգն է նշված կարմիրով: /1/

Բարձր Հայք

_____

2. Պատմական խնդիր.
Եթե պեղումների ժամանակ հայտնաբերվել է 5000-ամյա վաղեմությամբ իր, ապա պատմական ո՞ր դարաշրջանով է թվագրվում այն: /1/

Բրոնզե դար

_____

_____

3.Նշե՛ք նշված պնդումները ճի՞շտ են, թե՞ սխալ. /2/

ա)Արամազդը հայոց դիցարանում կրակի և ամպրոպի աստվածն էր:_սխալ է_____

բ)1555թ. Ամասիայի պայմանագրով Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Օսմանյան կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև:_սխալ է_____

3. Արքաներին դասավորել ըստ իրենց կառավարման հաջորդականության: /1/

1. Գագիկ 2-րդ
2. Լևոն 2-րդ
3. Հեթում 1-ին
4. Աշոտ 2-րդ
5. Արշակ 2-րդ
6. Տրդատ 3-րդ
7. Արգիշտի 1-ին
8. Վաղարշ 2-րդ

7-8-6-5-4-1-2-3

5. Կարդացե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին: /2/

<<Կառուցվեց շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և հռչակեց Հայաստանի քաղաքամայր>>:

ա) Ո՞վ է բերված հատվածի հեղինակը:

Մովսես Խորենացի

բ)Ո՞ր քաղաքին է վերաբերում վերը նշված հատվածը:

Արտաշատ

6. Լրացնե՛լ «Արշակունյաց Հայաստանի նշանավոր գահակալները» աղյուսակը: /3/

Գահակալի անունը	Գահակալման ժամանակը	Նրա օրոք կատարված նշա- նավոր իրադարձությունները
Խոսրով 3-րդ Կոտակ	330-338	Գահ բարձրանալով՝ Խոսրովը ձեռնամուխ եղավ նոր՝ Դվին մայրաքաղաքի կառուցմանը: Քանի, որ Արաքսը փոխել էր հունը և նախկին հունի մեջ՝ Արտաշատ մայրաքաղաքի մատույցներում ճահիճներ էին առաջացել: Նա նաև տնկեց Տաճար մայրի և Խոսրովի անտառները՝ որպես արքունի որսատեղիներ: Խոսրովի արգելոցը մեզ հասած հնագույն արգելոցն է աշխարհում:
Արշակ 2-րդ	350-368	Կաթողիկոսական աթոռը վերադարձվել է Գրիգոր Լուսավորչի տոհմին: Կաթողիկոս Ներսես Ա Մեծի և Արշակ Բ-ի նախաձեռնությամբ Տարոն գավառի Աշտիշատ գյուղում 354 թ-ին գումարվել է հայկական եկեղեցական առաջին կանոնադիր ժողովը, ընդունվել են նաև հեթանոսական սովորույթների դեմ կանոններ. արգելվել են մերձավոր ազգականների ամուսնությունը, բազմակնությունը և այլն: Արքունի զորաբանակը մեծացնելու, թագավորական իշխանությունն ամրապնդելու և նախարարներին թուլացնելու նպատակով Կոգովիտ գավառում հիմնադրել է Արշակավան քաղաքը, սակայն ըմբոստ

		նախարարները Պարսկաստանի օգնությամբ կործանել են այն:
Պապ	370-374	371 թ-ին Ձիրավի ճակատամարտում ջախջախել է պարսիկներին: Վերամիավորել է Հայաստանից անջատված ծայրագավառները, ապա սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ հայկական զորքերն ազատագրել են Արշակ Բ-ի օրոք Հայաստանից խլված տարածքները, որից հետո Պապն ընդունել է Շապուհ II-ի բարեկամության առաջարկը: Ներսես Ա Պարթև կաթողիկոսի մահից (372 թ.) հետո Պապը հաջորդ կաթողիկոսին չի ուղարկել Կեսարիա՝ օծվելու՝ դնելով Հռոմից Հայ եկեղեցու անկախացման հիմքը: Պապն ստեղծել է մեծաքանակ (90 հզ.) և մարտունակ բանակ:

7. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ: Կարդացե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին: /2/

«Տիրեց նա բազմաթիվ ամրոցների և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններից,
...իր եղբորից առավել շատ. և չեղավ մեկը, որ սարսափ ազդեր ամբողջ Հայաստան աշխարհի վրա
...մինչև իմ այս հիշատակի խոսքերը շարադրելու ժամանակները: Որովհետև իմաստուն այր էր, պատերազմելու մեջ վարժ և հմուտ...»:

Ո՞ր արքայի մասին է խոսքը, ո՞ր արքայատոհմի ներկայացուցիչ է նա և ե՞րբ է կառավարել:

Գագիկ 1-ին (990-1020), Բագրատունիների արքայատոհմ

8. Ո՞վ է պատկերված նկարում, ե՞րբ է նա կառավարել, ե՞րբ և որտեղ է թագադրվել: Պատմական ի՞նչ կարևոր իրադրձության կապվում նրա հետ: /2/

Լևոն 2-րդ Մեծագործ (1187-1219), 1198թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքում,
Կիլիկիայի հայոց թագավորությունՆ հռչակում

9. Որդուն պատերազմի ուղարկող մայրը, նրան տալով վահանը, պատվիրում էր. «Վահանով կամ վահանի վրա» :
Ո՞րն էր այդ մայրերի հայրենիքը : /1/

Սպարտան

10. Լրացրե՛ք բացթողումները և ճշտե՛ք ո՞ր իրադարձությունների սկիզբ հանդիսացավ հիշյալ կոչը: /2/

1095թ. Ֆրանսիայի___Կլերմոն_____քաղաքում__Ուրբանոս 2-րդ պապը_____կոչ արեց հավատացյալներին արշավելու դեպի Երուսաղեմ՝ անհավատներից փրկելու Հիսուս Քրիստոսի գերեզմանը:

Սկիզբ դրվեց խաչակրաց արշավանքներին

11. Նկարում պատկերված արձանը ո՞ր քաղաքի խորհրդանիշն է: Ե՞րբ է հիմնադրվել քաղաքը և ի՞նչ լեգենդ գիտեք դրա մասին : /3/

Արձանը Հռոմ քաղաքի խորհրդանիշն է:
Ավանդույթի համաձայն, Հռոմ քաղաքը հիմնադրվել է մ.թ.ա. 753 թվականին:
Լատինական քաղաքներից մեկում արքայի դուստրը ռազմի Մարս աստծուց ունեցավ երկվորյակներ՝ Հռոմուլոսին և Հռեմոսին: Արքայի եղբայրը, վախենալով, որ երեխաները կժառանգեն գահը, որոշեց ազատվել նրանցից, դրեց կողովը և նետեց Տիբրոս գետը: Սակայն ալիքները նրանց ափ հանեցին, էգ գայլն էլ կերակրեց: Մի հովիվ մեծացրեց ու դաստիարակեց նրանց: Եղբայրները վրեժ լուծեցին թշնամուց: Որոշեցին հիմնել իրենց քաղաքը: Այնտեղ, ուր ալիքները նրանց ափ էին հանել, սկսեցին քաղաք կառուցել: Բայց վեճ ծագեց, և Հռոմուլոսը սպանեց Հռեմոսին: Նա ավարտին հասցրեց քաղաքի շինարարությունը և իր անունով կոչեց Հռոմ: Խորհրդանիշը դարձավ էգ գայլը: Տարբեր վայրերից մարդիկ եկան և բնակվեցին Հռոմում: Հրապարակում կատարվեց հանդիսավոր ծիսակատարություն. փորվեց մի փոս, և յուրաքանչյուրն այն տեղ լցրեց իր հայրենիքից բերված հողը: